ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ

Օբյեկտի պահպանության իրականացման մասին

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Կապանի պահպանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ՝ Արտաշես Ալբերտի Մարտիրոսյան (այսուհետև՝ Պահպանություն) մի կողմից և ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Վարդան Հասրաթյանի (այսուհետ՝ Տնտմարմին) մյուս կողմից, կնքեցին սույն վարչական ակտը հետևյալի մասին.

1.1 Տնտմարմինը հանձնում է, իսկ Պահպանությունը ընդունում է (իրականացնում է) Կապան քաղաքի Լեռնագործների 5ա/1 հասցեում գտնվող ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի Սյունիք մարզային ստորաբաժանումը.

1.2 Օբյեկտի պահպանության համար Պահպանությունը ձևավորում է ոստիկանություն, ռազմականացված ԿՊԴ-ի /բռնող խմբի/ ծառայություն՝ միավոր աշխատակիցներով:

1.3 Պահպանության կողմից յուրաքանչյուր օբյեկտ, ենթաօբյեկտ, առանձին շենք, սենյակ կամ պահատեղ պահպանության ընդունելու, դրանք Տնտմարմին հանձնելու, դրանց տարածքում հասարակական կարգ ապահովելու կամ անցագրային ռեժիմ իրականացնելու կարգը ամրագրվում է սույն վարչական ակտով, նշելով.

Պահպանությունը իրականացնում է աշխատանքային օրերին ժամը 18-ից մինչև 09-ն,ոչ աշխատանքային օրերին՝ շուրջօրյա:

1.4 Մատուցված ծառայությունների համար Տնտմարմինը վճարում է վարձ՝ ամսական 85000 /ութսունհինգ հազար/ դրամի չափով, իսկ տարեկան 1020000 /մեկ միլիոն քսան հազար/ ՀՀ դրամ:

ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության Կապանի
պահպանության բաժնի պետ
ոստիկանության փոխգնդապետ
Ա.Մարտիրոսյան_____
Հ/Հ 900313099013
ՀԿՀՀ 09401235

ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ
աշխատակազմի ղեկավար
Վ.Հասրաթյան_____
Հ/Հ 900313507023
ՀԿՀՀ 02534328